

376

008

L-96

...

2010

ԼՈՒՍԱՒՈՐԵԱՎՆԵՐԸ,

ՈՒ

ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՐԱՄԱՆԱԻ

ՀԱՍԱՐԱԿԱՑ ԿԹՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԻ



ԴՆԵՐԸ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱԿԻ Յ. ՄԻԿԷՆՏԻՍԵԱՆ

1858

008

L-96

THE UNIVERSITY OF CHICAGO

1891

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

PHYSICS DEPARTMENT



LIBRARY

PHYSICS DEPARTMENT

UNIVERSITY OF CHICAGO

1891

87

008  
L-96

46

# ՄԱՍԻՆՈՐԵԱՆՆԵՐԸ,

ՈՒ

## ՄԱՍԻՆՈՐՈՒԹԻՒՆԸ,




Ի ՊԱՏԻԱՐԻՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

Տ. ՅԱՊՈՒԲԵՑ ՄՐԱԶԱՆ ԱՐԻԵՊԵՍԿՈՊՈՍԻ

ՀՐԱՄԱՆ ԱԻ.

ՀԱՍԱՐԱԿԱՑ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԵՒ



ԴԼԼԹԸ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՕՀԱՆՆՈՒ ՄԻԻՀԻՆՏԻՍԵԱՆ

1858

1896

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

PHYSICS

PHYSICS

PHYSICS

PHYSICS



PHYSICS

2511  
39

PHYSICS

1888

# ԼՈՒՍԵՒՈՐԵԱԼՆԵՐԸ

ՈՒ

## ԼՈՒՍԵՒՈՐՈՒԹՒՒՆԸ

Ա.

ԼՍԵՆ նոր բան կերպ կերպ մեկնութիւններու  
էնթակայ կ'ըլլայ . քանզի ընդհանուր կարծիքին և ա-  
ւանդութեան գրոշմովը վաւերացած չըլլալով՝ ամեն  
տիպը կրնայ առնուլ և նենդուիլ : Իսկ այն գրոշմը ըն-  
դունելէն ետքը՝ անտոյտոյ կրմնայ, ու շատ անգամ  
իւր վերջնական տիպովը յետագայ դարերուն կ'անցնի,  
և որքան դժուարութեամբ մտեր է՝ այնքան դժուար-  
ութեամբ կ'ելլէ : Գարերէ ՚ի վեր եղած փորձը կա-  
տարեալ հաստատութիւն կուտայ մեր բանին : Ահա  
թօնի յաւխտենական օրէնքները՝ հազիւ թէ դարի մը  
մէջ իրենց հակառակախօսներուն յաղթելէն ետքը՝  
Եւրոպիոյ ամեն կողմը սահեցան : Այնպէս Տէքաութի  
ծուռ դրութիւնները, դարէ մը ետքը՝ պաշտպաններ,  
ջատագոյններ ունեին :

Այս սկզբունքը դնելէն ետքը՝ չիզարմանանք եթէ  
լուսաւորութիւն բառը մեր ժողովուրդին մէջ հազար  
տեսակ ծուռ մեկնութիւններ կ'ընդունի : Իւրաքանչ-  
իւր ոք ըստ իւր կարողութեան գաղափար մը կը յօրի-  
նէ անոր վրայ : Այլ արժան է յառաջ բերել աստանօր  
այն ընդհանուր մեկնութիւնը, որ լուսաւորութեան  
ջատագոյլ կարծուած անձինք կուտան անոր :

Սպաքազաբիս Հայոց ժողովուրդը երկու կարգի  
կրթաժնուի իրեն սկզբանցը համեմատ : Առաջին կար-  
գի մարդիկը քիչ քիչ համարուածներն են և ազգին մե-

ծագոյն մասը կրճեացնեն : Ասոնք լուսաւորութիւնը վըսեմ՝ բառերով բացատրելու կարող չեն, սակայն անոր պահանջածը քաջ գիտեն և կը կատարեն : Ասոնք առաքինութիւնները կրթութեամբ չեն ստացեր, այլ իրենց կրօնքէն և ծնողքէն հայրենական աւանդութեամբ ժառանգեր են, և իրենց սիզւանց հարազատ կրման միշտ : Իսկ երկրորդ կարգի մարդիկ՝ ազգային աւանդութիւններէն հեռանալով՝ Աւրուսական լուսաւորութեան ջատագով կը պարծին :

Առսաւորութիւն, լուսաւորութիւն կը գոչեն ահեղ ձայնիւ, որոյ արձագանքը Արարատայ բարձունքը կը գուացնեն : Կրթութիւն, կրթութիւն կը գոչեն դարձեալ նոյն քաջամարտիկները : Առսաւորութիւնը անոնց դրօշակն է և կրթութիւնը անոնց երգը : Պանծալի դրօշակ, ազնիւ երգ : Իսկ մեք՝ որ տգէտ ժողովուրդին կարգէն ենք՝ կը պատասխանենք անոնց վառվռուոն սրտիւ :

« Քաջակրութիւն, քաջակրութիւն, ընթացէք այն հրեղէն շաւիղին մէջ, լուսաւորեցէք ազգը, կըրթեցէք ձեր որդիքը, որպէս զի ազգին և ձեր որդւոյ յաւիտենական երախտագիտութեան արժանանաք : Քանզի վայ այն ազգին որ այս լուսաւորեալ դարի մը մէջ տգիտութեան քօղին ներքեւ կը ծածկուի : Այն փառաւոր ապագայի մը չունի իրաւունք : Դուք էք ուրեմն ազգին յոյսը, դուք էք ազգին արեւը, արձակեցէք ձեր ճառագայթները անոր վրայ և լուսաւորեցէք զնա : Արժեցէք զնա գիտութեանց մէջ, տուէք անոր կարողութիւն իւր հանձարը բանեցընելու, պարարտեցէք անոր միտքը կրօնքին զօրութեամբ, որպէս զի օր մը մեր ազգն ալ լուսաւորեալ ազգաց տուժարին մէջ գովուք յիշատակվելու արժանի ըլլայ » :

Ահա այն է լուսաւորեալ ժողովուրդին ձայնը, այս է տգէտ մարդու մը աղաղակը : Դայց նախ ո՞վ ջատա-



գովք լուսաւորութեան, բացատրեցէք մեզ այն լուսաւորութիւնը, որ ձեր դրօշակին վրայ գրուած է, երգեցէք այն երգը, որ ձեր բերնէն յարածամ կը լսենք, որպէս զի տեսնենք թէ ձեր վարդապետութիւնները կը յափշտակեն մեր մտքը, և ձեր ներգաշնակութիւնները կ'զմայլեցնեն մեր լսելքը:

Խօսքիս թելը դեռ չաւարտած՝ ամեն կողմէն ծաղրական ձայն մը կ'ելլէ մինչեւ յերկինս: Կը ծիծաղին յիմար հարցմունքիս վրայ, կը ցաւին տգիտութեանս, կը զայրանան յանդգնութեանս դէմ այսպիսի անխոհեմ հարցմունք մը յարուցանելուս համար՝ և վերջապէս արհամարհանօք դէմքերնին կը դարձնեն:

Այլ ես գարձեալ կը դիմեմ ձեր առատագթութեան, ո՞վ լուսաւորեալք, թայլ տուք որ տգէտ մարդ մը ձեր բերնէն ընդունի լուսաւորութեան առաջին գասը: Դուք որ ջահը ձեռքերնիդ ունիք՝ մի զրկէք աւնոր լոյսը յինէն:

Այս անգամ լուսաւորելոց գթութիւնը շարժեցի, և ահա՛ կը տեսնեմ անոնց պարէն քաջամարտիկ մը ատեանը կ'ելլէ և այսպէս կ'սկսի խօսիլ:

« Լուսաւորութիւնը մտքին ջահն է, նոյն ջահը որ Եւրոպական ազգաց վրայ կ'արձրկէ իւր լոյսը, և զօր մէք կ'ողջունենք ՚ի հեռուսա ՚ի խորոց սրտի: Սեղի համար դեռ նոր արշալոյսը կը ծագի, բայց քիչ ժամանակէն արեւն ալ կը տեսնենք »:

« Ահ, պայծառ լոյս, կը պատասխանեմ: Խօսքերդ սրտիս բոլոր ծաղքերուն մէջ թափանցեցին, ո՞վ լուսաւորեալ, և յայժմէն լուսաւորութեան տեսնող կը տոջորիմ: Այլ եթէ հնար է՝ քիչ մ'ալ աւելի բացատրե այն լուսաւորութիւնը: Սեղինք ինձ այն լոյսը, այն արշալոյսը և այն արեւը: Դարձեալ, ուսն ինձ թէ ինչ կերպով այն լուսոյն մասնակից կրնամ ըլլալ »:

« Ըստ լուսաւորութիւնն է կ'երկրորդէ իմաստ

տուն քաջամարտիկը, իսկ զայն վայելելու համար պա-  
ֆոսնիկ ըլլալու է » :

— « Ի՞նչ կ'իմանաս պաֆոսնիկ ըսելով » :

— « Ահաւասիկ, կ'երրորդէ իմաստունը՝ բացատ-  
րեմ' այն պարտականութիւնները որ այս տիտղոսը կը  
պահանջէ զինքը կրողներէն » :

Այնչեցի ստեղ չէր թալ, ճնրադրութիւն չընել և  
չի խաչակնքել, քանզի այն ուսմական սովորութիւն  
մ'է : Հին գաղափարի տէր մարդիկը անարդեւ և չի  
պատուել, Աւրոպայի մէջ չըջիլ գէթ մէկ ամիս, և  
Աւրոպացւոց սովորութեանց և արտաքին ձեւերուն  
ըստ կարի յարմարիլ, մինչեւ անգամ անոնց շարժմանց  
և քայլառութեան կերպը առնուլ, թատրոն և պա-  
րահանդէս երթալ, պարել, երգել, մէկ խօսքով պա-  
ֆոսնիկ ըլլալ : Ահա ասոնք են մեր և մեզի նման լու-  
սաւորեւոց տիտղոսները : Այն անոր որ չունի անոնք,  
Քանզի նա անարժան է լուսաւորեալ ընկերութեան  
մը անդամ կոչուելու : (Այս խօսքերը ծափահարու-  
թեամբ կ'ընդունին իւր համախոհները) :

« Եւ, կը սրտասխանեմ, այս է ուրեմն լուսա-  
ւորութիւնը, այս է ձեր նշանը, այսպէս կը լուսաւո-  
րէք զձեզ և ձեր որդիքը, բայց մեկնէ այժմ ո՞վ լու-  
սաւորեալ, թէ ի՞նչպէս ազգերնից պիտի լուսաւո-  
րէք, դուք որ անոր սանձը ունենալու կը խորհիք և  
ջահ մը բռնած յառաջ կը դիմէք » :

« Ազգը լուսաւորութեամբ պիտի լուսաւորեմք, կը  
պատասխանէ խոհական քաջամարտիկը : Ազգը պիտի  
լուսաւորենք դպրոցները ծաղկեցնելով՝ նորանոր վար-  
ժարաններ հաստատելով՝ այլ և այլ ազգօգուտ հաս-  
տատութիւններ բնելով, ազգին կարգ կանոն տալով,  
ազգասիրութեան բոցը ամենուն սրտին մէջ արծար-  
ծելով և այլն և այլն » : (Այնպէս այս վերջին անգամ  
ծափահարութեամբ կ'ընդունուին այս խօսքերը) :

Արդ՝ ո՞վ լուսաւորեալ, դուն քո սկզբունքներդ յանուն համախոհ լուսաւորելոցդ յայտնեցիր. թոյլ տուր որ ես ալ ինքնիրենս խորհիմ և միտքս պարարտեմ այն քաղցր խօսքերով որք զմայլեցուցին զիս : Ուստի տուր ինձ ժամանակ խօսքերուդ հիւթը քամելու և ապա դատողութիւնս կ'ընդունիս :

Բ.

Տուած խրատներդ անաչառ դատողութեամբ քրննեցի. լուսաւորեալ մարդու մը պէտք եղած բարեմասնութիւնները, ինչպէս որ բացատրեցիր, ուշադրութեամբ աչքէ անցուցի, և վերջապէս սա կերպով համոզուեցայ որ այն բարեմասնութիւնները՝ փոխանակ լուսաւորեալ մարդ մը կազմելու՝ տգէտ, իմաստակ, յամառեալ և բոլոր առաքինութիւններէ մերկ արարած մը կը ձևացընեն : Հարկաւ ասանկ յանդուգն կարծիք մը արտադրելուս համար չարաչար կը յանդիմանես և կը դատապարտես զիս : Այլ ներէ՛ որ ըսեմ թէ իմ դատողութեանս վրայ ամենևին վտոահ չըլլաւ լով՝ առջի բերան ուրացայ, մերժեցի զայն, և սկսայ բարոյական և փիլիսոփայական գրքերու օժանդակութեամբ քննութիւնս յառաջ տանիլ : Ի այց ինչ եղաւ զարմանքս, երբ տեսայ որ անոնք փոխանակ դատողութիւնս քանդելու՝ կրկին և կրկին հաստատեցին զայն : Չի գտայ հատուած մը, տող մը, կէտ մը որ ձեր խօսքերը յայտնի և համարձակ չի ստեն : Ի ուրք լու-

1 Այս խօսակցութիւնը շինծու չէ : Ամեն մարդ առիթ ունեցեր է ինքնակոչ լուսաւորելոց բերնէն ասանց նման խօսքեր լսելու, և հոս աւրախութեամբ կը յայտնենք թէ ազգին ուսումնական կամ ճշմարտապէս լուսաւորեալ անձինքը ծաղրելու վատ խորհուրդը երբեք մտքերնուս մէջ չի ծնաւ : Անոնց համար մեր ունեցած համարումը և ակնածութիւնը հրապարակաւ յայտնելէն ետքը՝ միանգամայն կը ծանուցանենք թէ մեր նպատակն է պահպանել լուսաւորելոց քանի մը օգտակար գիտողութիւններ ընել :

սաւորութիւնը քանի մը ստեղծեալ ձեւերու մէջ կը բռնակալէր, իսկ նորա անխախտ սկզբանց վրայ կը հիմնեն զայն, և ձեր բանից ունայնամտութիւն, սնախառութիւն, ագիտութիւն կը գոչեն: Աւելորդ է այն հազարաւոր վիպութիւնները յառաջ բերել աստանոր, քանզի բաւ կը համարիմ իմ զօրութիւնս քեզի գէմ մաքառելու համար, և արդարեւ չէ՞ ամօթ այն մեծաւ մեծ անձինքը կոչել այնպիսի ասպարէզի մը մէջ, ուր չնչին արարածներ մարտ յարուցանելու կը պատրաստուին, նչ, թողունք անոնք, և առանց ուրիշի օգնութեան սխիւք մենամարտը: Առեն՝ սկզբանցդ և համոզմանցդ տաճարը յառաջագոյն կանգնեցիր, ես ալ քանդելու սխիւք ջանամ զայն այժմ:

Այդպէս է ուրեմն լուսաւորութիւնը, և արդարեւ աչքերս լուսաւորելոց դասին վրայ դարձնելու ըլլամ՝ կը տեսնեմ որ ճշմարտութեամբ խօսեցար ինձ և ձեր սկզբունքը յայտնեցիր ամենայն ճշդութեամբ:

Քանզի ահաւասիկ լուսաւորելոց քաջամարտիկներէն մէկը սուրբ Տաճարին մէջ: Օնրադրութիւնը քննելը և ստեղծ խաչակիւքը ամօթ կը համարի իրեն: Տես երեւին գոյնը, կարծես թէ երակներուն մէջ արիւնը չի շրջիր, արձանի նման անշարժ է, և այն սրբապաշտութիւնները որ ժայռերը անդամ կը դռուցնեն և գազաններուն ջիղերը կը դողացնեն՝ անոր վրայ ամենեւին ազդեցութիւն չունին: Այն հազիւ թէ ժամաւ նակ կը գտնէ տաճարէն դուրս փախչելու, բաւ համարելով հասարակութեան իւր անձը ջոյց տալը: Այս է ուրեմն քո լուսաւորութիւնդ: Սարսափելի խաւար որ հողիդ և միտքդ կը պատէ: Առեն որ Աւրօպիոյ մէջ ճանապարհորդութիւն ըրած ես հարկաւ (քանզի լուսաւորութեան տիտղոսներուն մէկն ալ այն է) եթէ սուրբ տաճարի մը այցելութիւն ընէիր՝ յայնժամ կը տեսնէիր թէ ի՞նչ ջերմեռանդութեամբ Աստուծոյ

որդիքը իրենց հօր առջև կը ծնրադրեն, և ի՛նչ վաւ  
 ուարանութեան և ողբերու ձայներ կ'երլեն յերկինս :  
 Արքա ամօթ չեն համարիր իրենց հօր, իրենց ստեղ-  
 ծողին առջև նուաստանալու, և մեր դարուն ամենե՛ն  
 երևելի մարդիկը որք անոր պարծանքն են՝ Շաթօպ-  
 ուխան և Ամասութին՝ իրենց սուրբ երգերովը աշխարհը  
 թնդացուցին և անցեալ դարուն փլատակներուն վրայ  
 նորանոր և շքեղ տաճարներ կառուցին : Վայ քեզ  
 լուսաւորեալ, Աստուծոյ և մարդոց անէծքը քո վրայ  
 են, դու ընկերութեան և ազգիդ նախատինքն ես,  
 և քո չար օրինակովդ՝ մոլութիւններդ ուրիշներու ալ  
 կը հաղորդես : Իւր բիւրս առաւել յարգ ունի իմ  
 առջևս քո փգե՞ք և ռամիկ կոչած ժողովուրդը : Աս ինչ  
 պէս որ յառաջագոյն նշմարեցի՝ կըթութեամբ բարու  
 յական սկզբունքներ չէ ստացեր, և հոգևոր պարտա-  
 ւորութիւնները ուսուցիչէ չէ սովորէ : Բայց տես այն  
 ուամիկը սուրբ սեղանին առջև՝ ի՛նչ ջերմեռանկու-  
 թեամբ իւր ստեղծողը կը պաշտէ. հոգին խռովեալ է  
 և դէմքը այլայլեալ. քանզի նա կը մարանջի մոլութեց  
 դէմ և Աստուծոյ ասեանին առջևն է. իւր մեղքերը  
 կը խոստովանի և անոր գթութիւնը կը խնդրէ, կ'ող-  
 բայ կը դղջայ, և գիտնալով որ իւր գթած հայրը կը  
 թողու՝ հոգին և միտքը կը հանդարտին, և տաճարէն  
 դուրս կ'երլէ առաքինութեամբ զարդարեալ և լի ե-  
 րախտագիտութեամբ : Թող ուրեմն որ ես ալ այն  
 ուամիկ ժողովուրդին դասէն ըլլամ :

Ահաւասիկ ուրիշ լուսաւորեալ մը, հուր բորբոք-  
 եալ կը յարձրկի իւր ոտխներուն դէմ, որք են ռամիկ  
 կոչած կամ հին գաղափարի տէր մարդիկը : Կը պախաւ-  
 րակէ զնոսա իբր թշնամի լուսաւորութեան և ազգա-  
 յին յառաջադիմութեան և ազգօգուտ ձեռնարկու-  
 թեանց : Չարախօսութիւն, կշտամբանք, նախատինք,  
 անէծք՝ պատուհասի նման անոնց վրայ կը թափին :

Ո՛հ, քե՛զ պատասխանեմքեզի, լուսաւորեալ: Այր հու ոտխի մէջ որո՞ն պաշտպանութիւնը առնեմ: Քանզի տուած վճիռս որքան արդար երեւնայ՝ դարձեալ հողմնապահութեան շուք մը կրնայ տալ: Այլ ես ձեռքս խղճմտանքիս վրայ դնելով՝ անաչառ դատողութեամբս և ներքին համոզմամբս՝ այսպէս կը պատահանեմ:

Արդարեւ՝ այն անձինքը ձեզի նման լուսաւորեալ չեն և ձեր սկզբանց ոչ մէկը կ'ընդունին: Սակայն փոխանակ ազգակործան ըլլալու՝ ինչպէս որ կը սնդէք, ըստ մեր կարծեաց՝ նոքա ազգասիրութիւնը ձենէ լաւ կը հասկընան, ու անոր պահանջմունքները լաւագոյն կերպիւ կը կատարեն: Ազգասիրութիւնը միայն բանիւ չեն քարոզեր, այլ և գործով ցոյց կուտան: Ազգասիրութիւնը, կեղծաւորութեամբ՝ շահու՝ փառք կամ պատիւ ստանալու համար չեն կրեր: Այլ այն անջնջելի սէրը զգացմամբ ունին. կ'ուզէք որ դրութիւն հաստատեմ խօսքս: Ահաւասիկ գրութիւնս:

Մեր ազգին էութեան գլխաւոր տարրը կրօնքն է և կրօնքը ու աղբը անբաժանելի են: Ասկից բնակաւ նապէս կը հետեւի որ կրօնասիրութենէ կը ծնի ազգասիրութիւնը: Այս ճշմարտութիւնը անուրանալի է, և հոս փոխանակ նորանոր փաստեր յառաջ բերելու, ընթերցողը կը յորդորենք որ Սասիս պատուական լրագրոյն 383, 384, 385 թիւերուն մէջ հրատարակուած բանասիրականները աչքէ անցընէ, ուր այս ճշմարտութիւնը անուրանալի կերպիւ ապացուցեալ է:

Արդ՝ եթէ ազգասիրութիւնը կրօնասիրութենէն կը ծնի, և ըստ որում հին գաղափարի տէր մարդիկ ըստ ձեր ասելոյն՝ կրօնասէր և մինչև անգամ մոլեռանգ են՝ հարկաւ ձենէ առաւել ազգասիրութիւն պէտք է ունենան և ունին:

Դարձեալ այն ձեր ուսի կոչածները կ'ամբաստաւ

նէք իբր ազգին լուսաւորութեան և յառաջագիտութեան արգելք : Անիրաւ ամբաստանութիւն : Ի միտ առ, սլ լուսաւորեալ, թէ այն անձինքը՝ եթէ ձեր ազգօրուտ ձեռնարկութեանց ընդդիմութիւն կ'ընեն՝ ազգին շահը և օգուտը ոտքի առի առնելու խորհրդով չէ : Քանզի արդէն հաստատեցինք անոնց առաւելքան զձեզ ազգասէր ըլլալը : Այլ ձեզի ազգօրուտ երեցածը՝ անոնց ազգակործան կը թուի, ձեզի լուսաւորութիւն երեցածը՝ անոնց խաւար կը թուի : Այլ դժբաղդաբար քանի մը ազգային նոր ձեռնարկութիւններ, զորս այնքան եռանդով սկսայք՝ իրենց անյաջողութեամբը ցոյց տուին, թէ լուսաւորելոց կարգէն չեղողներն ալ երբեմն իրաւունք կրնան ունենալ և խոհականութեան միջանակը ստանալ : Արդէն կը սարսափիք տեսնելով ձեր ազգասիրական գործքերուն անպտուղ մնալը : Արդէն՝ վհատեալ, կիսամեռ՝ կ'սկսիք թողուլ այն դիւցադնական դաշտը, ուր այնքան փառաց պսակներ քաղելու պարաստուեր էիք : Այլ և քաջութեամբ յետս կ'ընթանաք, քանզի ձեր սխալիք կ'ուրանաք, և չէք խոստովանիր որ ձեր անարգած հին գաղափարի տէր մարդիկը՝ խոհեմ նախատեսութեամբ մը ցոյց ետուն ձեզի այն ահագին ժայռերը, որոց գէմ ձեր բոլոր ջանից ու ճգանց նաւակը խորտակուեցաւ : Իսցց չիմեղադրենք զձեզ : Քանզի մարդուն մեծամտութիւնը չարաչար վիրաւորող՝ իւր սխալմանց խոստովանութիւնն է կ'ըսեն իմաստունք :

Ահաւասիկ՝ ուրիշ լուսաւորեալ մը, գեղեցիկ ըզգեստներով զարդարեալ ՚ի հեռուստ գեղերելով դէպ առ իս կը գիմէ : Քայլառութեանէն և շարժմունքներէն իսկոյն կը հասկընամ թէ իւր մարմինը չարաչար կը տանջէ չեմ գիտեր ո՞ր ազգի մարդկանց նմանելու համար : Այլ մօտենայ և կը բարեւէ զիս՝ բայց կարծես

Թէ նոյն միջոցին դժուարին գործողութեան մը կ'ըս-  
կըսի : Քանզի ձեռքը ճակտին վրայ կ'սկսի դողալ, մը-  
կանուները կը կարկամին և հազարու մէկ ձեւեր կ'առնու :  
Խօսակցութեան կ'սկսի, հայերէնը, գաղղիներէն կամ  
խոսակերէն բառերով կը խմորէ, հարկաւ իւր լեզուա-  
գիտութիւնը ցոյց տալու համար : Եւրոպիոյ գիտու-  
թեանց, գեղարուեստից և օրինաց վրայ կ'սկսի խոր-  
հորդածել : Գիտութեանց վրայ խօսած միջոցին՝ այն-  
պիսի ձեւ մը կ'առնու որ կարծես Թէ մեծ համալ-  
սարանի մը դասատու է : ( ) օրինաց վրայ ալ տրամաբան է՝  
Եւրոպիոյ առաջին ատեաններուն դասաւորներուն  
չափ հմտութիւն ցոյց կուտայ : Ունայն խօսքերով՝  
փուճ խորհրդածութիւններով՝ սնտաի պարծանքով և  
ունայնամտութեամբ փառաւորեալ ողբալի արարած  
մը կը տեսնեմ, զոր գրիչս նկարագրելու զօրութիւնը  
չունի : Իսկ ցաւալին այն է որ զինքը ծափահարողներ  
ալ կը գտնէ : Քանզի՝ մարդիկ սովորաբար իրենց շա-  
հը՝ ուրիշի պակասութիւնները ուղղելու փափաքէն  
նախապատիւ կը դասեն :

Ե՛հա՛ ասոնք են Եւրոպացի մէջ ստացած դաղաւ  
փարներդ ու հմտութիւնդ, ո՞վ լուսաւորեալ : Ե՛յս է  
լուսաւորութիւնդ՝ զոր շարժմանցդ և ձեւերուդ մէջ  
դժպացընել կ'ուզես, աւանց գիտնալու որ այն լոյսը  
ներսէն դուրս կը ծագի, և անոր կեդրոնը միտքն է :  
Ո՛հ, երանի Թէ Եւրոպացի մէջ քանի մը ամիս ժուռ-  
չիգայիր, քանզի նոր բան մը չուսանելէդ 'ի դատ՝ այ-  
սուհետեւ փոքրիկութիւն կը համարիս ուրիշի բան հար-  
ցընելը, և հետեւաբար բոլոր կեանքիդ մէջ տգէտ կը  
մընաս : Իսկ որ չարագոյնն է՝ ուրիշի ալ ծուռ դաղաւ  
փարներ կը հաղորդես :

Ե՛հաւասիկ ուրիշ լուսաւորեալ մը : Վառվուռն  
սրտիւ և գովելի եռանդով կ'սկսի աղգասիրութիւն  
քարոզել : Կը ցաւի, կ'ողբայ ազգիս տգիտութեան



վրայ ու լուսաւորութենէն հեռու մնալուն համար, և այնպիսի սրտաուռ երգերով կրնկարագրէ անոր վիճակը որ հոգւոյս լարերը կը հնչեցնեն: Վարդոյնէրուն կարգ կանոն տալու, գիտութիւնը ամեն աստիճանի մարդոց մէջ մտցնելու, նորանոր վարժարաններ համալսարաններ հաստատելու, օգտակար գրքեր հրատարակելու, մէկ խօսքով մեր ազգն ալ քաղաքակրթութեալ ժողովրդոց հետ գասելու եռանդով վառեալ է:

Վովերի եռանդ, ազնիւ բաղձանք: Այն ես ալ քեզի հետ կը ցաւիմ ազգին վիճակին վրայ, չեմ ուրանար անոր պակասութիւնները, և գիտեմ թէ փոխանակ յառաջագիմելու, յետս յետս կ'ընթանայ: Ոչ բանք ուրեմն Հայաստանի աշխարհը, երգե՛նք այն ազնկաւոր երգը որ դարեր առաջ այնքան արցունքներ հանեց մեր սուրբ հարց մեկունն աչքերէն, այլ և քննենք այն բարեկարգութիւնները որոց վրայ ազգին ուշադրութիւնը կը հրաւիրես, իբր միակ դարման իւր սպառայն ազատելու համար: Արարե՛մ և կ'ընդունիմ գաղափարներդ ՚ի մասին ազգային լուսաւորութեան: Վանդի ո՞վ չգիտեր որ ժողովուրդի մը լուսաւորութիւնը անոր մտաւորական կարողութեանց մշակումէն կ'սկսի: Վարձեալ ո՞վ չգիտեր թէ որքան մտքին հորիզոնը ընդարձակի՝ այնքան ալ մարդկային կենաց ասպարեզը կ'ընդլայնի: Մտել է որ առաջարկած բարեկարգութիւններդ անշուշտ ազգին և մարդուն երջանկութիւն պիտի մատակարարեն: Այլ բռն ինձ թէ ի՞նչ կերպով այն բարի տնօրէնութիւններդ կատարելու կը խորհիս: Ո՞վ լուսաւորեալ, հարկաւ գիտես թէ անոնք մե՞ծ գումարներ և արթուն հսկողութիւն կը պահանջեն: Ունիս այն գումարները, ունիս այն հսկողութիւնը: Այլ դարձեալ ի՞նչու համար մինչև ցարգ բարեկարգութիւններդ ՚ի գործ դնելու չաշխատեցար, և անոնց մէկ ճաշակը ազգին չիմա

տուցիր : Պար պար փողոցներու մէջ, տանիքներու վրայ, ՚ի ձայն փողոց և թմբկոյ լուսաւորութիւնը քաւրողելը մեծ քաջութիւնն չեմ համարիր : Աւելի մեծ քաջութիւնն է այն լուսաւորութիւնը տարածելու համար, ամեն կերպ ջանք և զոհ ընել : Բնդէր ուրեւ մըն անիրաւաբար կ'ամբաստանէք կիս Գաղափարի գիր մարդիկը իբր թշնամի ազգային յառաջադիմութեան : Արքա ամեն վայրկեան լուսաւորութիւնն չեն գոչեր, այլ և ազգին օգտակար կարծուած տնօրէնութիւնները ՚ի գործ դնելէ չեն խորշիր : Վ կայ քանի մը ազգային հաստատութիւններ, որոնք անոնց նպատակը հիմնարկուեցան և անոնց ջանքովը պածաւացան : Վ կայ ազգային ձեմարանի հաստատութիւնը, որ ազգին մեծամեծ յոյսեր կուտար, և որ ձեր հարուածներէն քայքայեցաւ : Վ կայ սուրբ Փրկչի վարժարանը, որ մինչև ցայսօր կը փայլի և որոյ հաստատութեան փառքը ու մանք անիրաւաբար յափշտակել կ'ուզեն : Իսկ դուք՝ լուսաւորութեան ջատագովք կը պարծիք, անոր դրօշակը կը կրէք՝ և մինչև ցարդ ազգին քաղաքակրթութեան վերաբերեալ ձեռնարկութեան մը չ'սկսայք : Այ կը սխալիմ, քանի մը մեծ հաստատուեց սկսայք և թնդանօթներով ծանուցիք զայն աշխարհի : Բայց բնչ եղաւ վերջը, նորահաստատ հիմունքը քայքայեցան, և ցաւազին սրտիւ կ'ըսեմ թէ քիչ ժամանակէ՛ անոնց հետքը անգամ չ'իպիտի մնայ ՚ի մեծ սուգ ազգին :

Եթէ ձեր հաստատութեանց անյաջողութեան պատճառները քննելու ըրանք՝ ամեն բանի մէջ ձեր անփորձութիւնը կը տեսնենք . քանզի չի գիտցաք սա աշխարհածանօթ ճշմարտութիւնը թէ՛ մեծ նպատակներ գլուխ հանելու համար՝ մեծ կարողութիւններ պէտք են : Այլ պէտք է որ անցեալը ներկային խրատ ըլլայ : Թողէք ուրեմն այսուհետեւ մեծամեծ հաստատութիւններ ընելու քաղցը կամ լաւ ևս պարծանքը :

և անոնք դարձեալ սկսելու համար՝ նախ ձեր կարողութիւնները բազմացուցէք: Առ այժմ՝ աշխատեցէք շատ զպրօցները բարեկարգելու, ուսմունքը ամեն կարգի ժողովրդոց մէջ ըստ կարի տարածելու, գիտութեան ճաշակը ամենուն մատակարարելով, մէկ խօսքով ձեռքերնէդ եկածը մի խնայէք ազգին զայն քաղաքակրթութիւնը համար: Ահա այս է ձեր պաշտօնը առ այժմ:

Գ .

Մինչեւ ցարդ ազատ խօսեցայ, ո՞վ լուսաւորեալք, և արդարեւ լեզի է այն բաժակը որ կը մատակարարեմ ձեզ: «Այլ եթէ ուժգին կը խօսիմ՝ մի գարմանաք, քանզի ճշմարտութիւնը ազատ է և ահեղ<sup>1</sup>»:

Ձեր սկզբունքները քննելէն և մերժելէն ետքը՝ այժմ պիտի սկսիմ նկարագրել ճշմարիտ լուսաւորեալ մը, որ օրինակ առնէք զձեզ և ձեր որդիքը կրթելու համար: Յետոյ պիտի բացատրեմ ժողովուրդի մը լուսաւորութիւնը, որպէս զի այն կերպով լուսաւորելու ջանաք ձեր ազգը: Այս նիւթին վրայ ընդարձակ ճառելու դիտաւորութիւնը չունիմ, այլ քանի մը պարզ և ընդհանուր սկզբունքներ պիտի նշանակեմ: Ի այց այսուհետեւ պիտի ներէք որ երբեմն իմաստնոց խօսքերը յառաջ բերեմ, քանզի այսպիսի ծանր խնդրոց մը մէջ մեր հատորներէն առաւել՝ անոնց վկայութիւնները համոզիչ են:

Յսկիզբն բանիս ես ալ անմահ Պօսիւէի պէս կը գոչեմ: «Աստուած իմ, տուր ինձ բան, ոչ այն բանը որ մարդոց լսելէքը կը շողոքորթէ և անոնց գովութիւնը կ'ընդունի, այլ այն բանը որ անոնց սրտին մէջ կը թափանցէ<sup>2</sup>»:

<sup>1</sup> Ֆենելոն: Նամակ առ Լուդովիկոս 27: <sup>2</sup> Քարոզ ընդդէմ աշխարհի:

Այս մաղթանքը ընելէն ետքը կ'սկսիմ խօսակցիլ ձեզի հետ :

Եւսաստորութիւնը երկու տեսակ է : 1. նիւթաւեան, 2. բարոյական : Նիւթական լուսաւորութիւնն է արհեստից և արուեստական գիտութեանց ծաղկիլը<sup>1</sup> : Իսկ բարոյական լուսաւորութեան տարերքն են՝ « Ժողովուրդի մը հաւատքը, օրէնքը, կենցաղավարութիւնը և աւարինութիւնները<sup>2</sup> » : Սէնք չունինք աւսջինին վրայ խօսելու ; որն էապէս նիւթական է : Իսկ երկրորդ լուսաւորութիւնը, զոր բարոյական անուանեցինք՝ մտքին մէջ կը ծնի, և հան կը բնակի : Սայրը հաւատքն է, և ճնունդը բարոյականութիւնը, որ կ'ուսուցանէ « կիրքերը չափաւորել, աւարինութիւնները մշակել և մողութիւնները սանձել<sup>3</sup> » :

Սեր համադրութիւններէն ոմանք՝ ցաւալի տգիտութեամբ մը, ինչպէս որ ցաւաջագոյն յայտնեցինք՝ լուսաւորութիւնը քանի մը անարգելի ձևերու մէջ և դատարարաբարութեան քանի մը չնչին կէտերու վրայ կը հիմնեն : Արծնական պարտաւորութիւնները չէ կատարել, Աւրոպացւոց լեզուներէն քանի մը բառ գիտնալ՝ անոնց հապուստը կրել, Աւրոպիոյ մէջ շքել, նուագել, պարել, ասան ասոնք են լուսաւորութիւնը կըրտն : Այլ էս կըրտեմ թէ՛ բարձրագոյն գիտութիւնը անգամ լուսաւորեալ մարդ մը չեն կազմեր եթէ՛ անոր հոգւոյն սնունդ չեն մատակարարէր : Քանզի գիտութեանց նպատակն է ճշմարտութիւնը գիտնալ, խորնորել և սիրել զոյն : Իարձեալ « գիտութիւնը մի է՝ ինչպէս որ հաւատքը, և անհնար է մէկը թողուլ աւանց միւսը ուրանալու<sup>4</sup> » մէկ խօսքով լուսեմ թէ՛ գիտութիւնը զ'ստուած կը հռչակեն, և ի՞նչ որ անոնց մէջ իւր Աստուածը չէ տեսեր, իւր հաւատքը չէ ճանչցեր,

<sup>1</sup> Պէշուել, բառգիրք : <sup>2</sup> Նոյն : <sup>3</sup> Առօջիտ.բօ : <sup>4</sup> Եւ. Քիս :

խմաստուն, լուսաւորեալ երբէք չըլար՝ որքան ալ ընդարձակ հմտութիւններ ունենայ :

Ահա օրինակով մը բացատրեմ միայն : Վիցուք թէ մէկը աստղաբաշխական գիտութիւնները լաւ մշակեր է . Արեգակին և լուսնին խաւարումները ճշդութեամբ կը գուշակէ, մոլորակներուն շրջանները կը չափէ և անոնց ընթացքին օրէնքները լաւ գիտէ և այլն : Այլ եթէ՝ ամեն վայրկեան Աստուծոյ ահեղ աջը չի տեսներ իւր դիտած մոլորակներուն վրայ՝ եթէ Աստուծոյ ըսբանչելի շուքը չի տեսներ այն խաւարումներուն մէջ, եթէ՝ Աստուծոյ պայծառ աչքը չիտեսներ երկնից աստեղներուն վրայ՝ նա կ'ըսեմ գիտուն է, իսկ լուսաւորեալ չէ : Անոր հանձարը հարստացած է՝ բայց միտքը կտր է և խաւարի մէջ կը մնայ : Բսել է որ գիտութեանց նպասակն է հանձարը պարարտել և միայն լուսաւորել՝ զ՝Աստուծոյ, հաւատքը և հետեւաբար մարդկային պարաւորութիւնները ուսուցանելով : Սե՛ն Նեւթոն, մե՛ն Պօսիւէ գլուխնին բայ և յերկինս նկատելով՝ Աստուծոյ անունը կ'արտասանէին :

Այլ և կ'ըսեմ թէ լուսաւորութիւնը բարձրագոյն գիտութիւններով միայն չստացուիր : Սեր կրօնքը այն լուսոյն աղբիւրն է, հետեւաբար ճշմարիտ լուսաւորութիւնն է կրօնասիրութիւնը, որով և բարոյական սկզբանց հետեւիլը :

Արդ ահաւասիկ ճշմարիտ լուսաւորեալ մը :

Օնա՛ծ օրէն իւր ստեղծողին անունը ականջին հընչեց մօրը բերնէն : Բանզի անոր մայրը գիտէր որ « այն զգացմունքները մշանջենաւոր են, որք օրօրոցին շուրջը կը ծնին<sup>1</sup> » : Աստուծոյ երկիւղը սրտին մէջ ծնաւ, և այն օրէն սկսաւ անոր իմաստութիւնը : Բանզի « սկիզբն իմաստութեան երկիւղ տեառն է<sup>2</sup> » : Ի մանա

<sup>1</sup> Էմէ - մարթէն . Դաստիարակութիւն մարց : <sup>2</sup> Սողմն :

կութեանէ առաքինութիւններով զարգարեց իւր հոգիին ու բոլոր կենացը համար առաքինութեան պատկը ձեռք ձգեց : Օ՛ր « երիտասարդ մը իւր սուջի շաւիղին մէջ կ'ընթանայ , և ծերութեան մէջ անգամ անկեց շիկտորիբ<sup>1</sup> » : Դպրոց կրթուեցաւ և անդ ուսաւ քրիստոնէական վարդապետութիւնները , որոց պատուիրանքը քաջ գիտէր և կը պահէր . զի լսեր էր սա խօսքերը : « Ի՞նչ պտուղ պիտի քաղէին պատանիք դպրոցներուն մէջ , երբոր դուրս ելլելէն ետքը՝ զ՛ստուած և անոր յատկութիւնները ճանչնային<sup>2</sup> » : Գիտութեանց մէջ վարժուեցաւ , ամեն նոր գիտութիւն Մատուծոյ մէկ նոր յատկութիւնը ցրցուց նմա , դուաւ անոնց աղբիւրը , և սրարարեց միտքը : Քան զի լսեր էր սա գանգատանայ խօսքերը . « մեր յիշուածութիւնը լեցնելու միայն կ'աշխատինք՝ մտքերնիս և խղճերնիս դատարկ կը թողունք<sup>3</sup> » : Վերջապէս տեսաւ « զ՛ստուած , զբանն անսպառ , վերջ գիտութեանց<sup>4</sup> » . և եղև « տաճար Մատուծոյ<sup>5</sup> » . զի « արքայութիւն Մատուծոյ ՚ի ներքս ՚ի ձեզ է<sup>6</sup> » :

Իհնա այս է ճշմարտապէս լուսաւորեալ անձը , որուն հաղիւթէ կրցի շինական պատկերը ուրուագրել<sup>7</sup> :

Իսկ դուք՝ որ լուսաւորութեան ջատագով էք՝ անոր նմանելու և ձեր որդիքը անոր օրինակին հետեւցրնելու ջանայէք : Այ՛ , դարձեալ կ'ըսեմ թէ լու-

<sup>1</sup> Աւակայ ԻՐ . 6 : <sup>2</sup> Լամի , գիտութեանց վրայ խօսակցութիւն : <sup>3</sup> Մօնթէնը գիրք Բ . գլուխ 24 : <sup>4</sup> Սէն - Մատք - Ժիրարտէն : <sup>5</sup> Պօսիւէ . 7 . քարոզ յարութեան օրին համար : <sup>6</sup> Աւետարան :

<sup>7</sup> Ընթերցողը չկարծէ որ մեր գրիչը մղեւանգութեան գրգռեալ այս խօսքերը կ'արտադրէ : Դարձեալ թոյ չիղարմանայ եթէ բարցական կրթութիւնը որ կրօնէն կը բղխի այսքան գերազանց կը դասնէր : Հարկաւ գիտէ որ Եւրոպիոյ բողոքականութեալ աղգերը անհաւատութեան երկարաշուն և աշխարհակործան փորձը ընելէն ետքը՝ վերջապէս համըռուեցան որ առանց կրօնքին զօրութեամբ չեն կրնար աճիլ : Եւ այսօրուան օրս՝ մանկանց դատարարութիւնը կրօնագիտութեանն սկսելը գրեթէ ամեն տեղ օրէնք կ'ըսմ է :

սաւորութիւնը պափրակի ըսել չէ՛. ձեր բանից սնաւ-  
 փառութիւն կը գոչեն իմաստունը : Հան հեռու էք  
 այն ազգիւրէն ուր ձեր ծարաւը յագեցնել կ'ուզէք :  
 Կը ներէք որ աւելի ազատ բացատրեմ միայն : Ահա  
 ւասիկ . ձեզի կ'ըսեմ թէ դուք ձեր գիտցածով՝ որով  
 այնքան կը պարծիք՝ առաւել տգէտ էք քան զտգէտ  
 ռամիկը , և ձեր գիտութիւնը վնասակար է ձեզի :  
 Քանզի ձեր գիտութեան վրայ խորխորանալով՝ և ձեր  
 հանձարին ապաւինելով՝ կը մերժէք այն լոյսը որ Ար-  
 տուած իւր բնական արարածոց տուեր է զերեւիք  
 կառավարելու համար : Ամենէն պարզ բանի վրայ կը  
 մերժէք ուրիշի խորհուրդը , կը մերժէք անոնց գատու  
 զութիւնը , կ'ուրանաք անոնց բնական յատկութիւն  
 ները , և յարածամ ձեր դատողութեանը կը դիմէք ,  
 որ մոլորութենէ՛ ՚ի մոլորութիւն կը դեզերի : « Ի միտ  
 սոյն յարածամ , կ'ըսէ փիլիսոփայ մը , թէ տգիտութե-  
 նէն չարիք չլծնան , այլ ծուռ կարծիքները միայն վնա-  
 սակար են : Քանզի տգիտութեամբ չէ՛ որ մարդս կը  
 մոլորի , այլ նա որ զինքը գիտուն կը կարծէ , նա կը  
 մոլորի » : Ահա ձեզի անժխտելի վկայութիւն մըն ալ  
 ՚ի հաստատութիւն մեր բանին : Տեսէք ի՛նչպէս կը  
 խօսի երեւելի Ռաքայը :

« Գիտութիւնը երկու ծայր ունին , որք իրարու  
 ձեռք կու տան : Առաջինն է այն բնական տգիտու-  
 թիւնը ուր մարդիկ կը գտնուին ՚ի ծնանին , իսկ միւս  
 ծայրն է այն՝ ուր գերազոյն անձինք կը հասնին , մարդ-  
 կային գիտութեանց բոլոր աստիճաններէն անցնելէն  
 ետքը՝ և վերջապէս կը համոզուին իրենց բան չի գիտ-  
 նալնուն վրայ , և այն սկզբնական տգիտութեան մէջ  
 կը վերածին , ուստի մեկներ էին : Բայց այն ինքնա-  
 գէտ տգիտութիւն մըն է : Իսկ նոքա որք բնական  
 տգիտութենէն ելլելով՝ միւս ծայրը չեն կրցեր հաս-  
 նիլ՝ գիտութեանց ներկը միայն ունին և կ'սկսին խը-

բոխտանալ գիտցածնուն վրայ : Սորա աշխարհք կը պրդատորեն և ամենէն ծուռ կը դատեն<sup>1</sup> » :

Մտկից չենք ուզեր հեռուցընել թէ մարդս գիտութեանց գէթ առաջին աստիճանին վրայ քայլը առնելու չէ՞, եթէ բարձրագոյն աստիճանի հասնելու կարողութիւնը չունի : Ինդհակառակն՝ լաւ և արժան է գիտութեանց ճաշակը առնուլ, սակայն այնքանով ոչ որ զինքը լուսաւորեալ կամ գերագոյն անձ մը կարծելու է, եթէ չունի լուսաւորութեան այն տիտղոսները զորս նշանակեցինք, և իւր հանձարին գանձին ապաւինելով՝ երկնային գանձերը մերժելու չէ՞ :

Աւրեմն՝ ճշմարտապէս լուսաւորեալ ըլլալու հաւմար՝ նախ միտքդ լուսաւորէ՛, քանզի « մտօք միայն կը գտնենք արդարութեան ընդհանուր կանոնները, որք մեր գործերը կ'ուզղեն<sup>2</sup> » : Յաւիտենական ճշմարտութիւնները ուսիր, քանզի « յաւիտենական ճշմարտութիւնք են որք կը պաշտպանեն զմեզ անցաւոր սխալմանց դէմ<sup>3</sup> » : Հանձարդ մշակէ՛ եթէ այն կարողութիւնը ունիս, և կրթէ՛ զքեզ, քանզի « կրթութեան նպատակն է տալ մարդուն այն կատարելութիւնը, որոյ ընդունակ է նա<sup>4</sup> » :

Կրթութեան մեջն է նաև բարի բարուց ծառայելը, որուն ազդեցութիւնը մեծ է ժողովուրդի մը ճակատագրին վրայ : « Աւր որ ժողովուրդ մը բարի բարքեր ունեցաւ՝ նա մեծ եղև<sup>5</sup> » : Հոս՝ առիթ կը գրտնենք բտելու թէ՛ Վերոպայի լուսաւորեալ ազգերէն ոմանք ցաւալի տեսարան մը կը ներկայացնեն իրենց բարուց կողմանէ : Թէպէտ շատ խոհեմ մարդիկ իրենց ազազակներովը և սպառնալիքովը մոլորութեանց յորձանքին դէմ դնելու կը ջանան՝ բայց ի՛նչ օգուտ՝ ժա-

<sup>1</sup> Խորհրդածութիւնք : <sup>2</sup> Սմիթ . Տեսութիւն բարոյական զգացմանց :  
<sup>3</sup> Տիկին Սթաւէլ, Գեղմանիա : <sup>4</sup> Քանդ : <sup>5</sup> Պէննարտէն տը Սէն-Քիւս . Ճառ կանանց Գատարակութեան վրայ :



մանակը անցաւ, հոսանքը բարձրացաւ և աշխարհք հեղեղելու կոպտուհայ, և որ սուելի ցաւալին է՝ ու մանք մեր համազգեայց, կուրաբար այն յորձանքին մէջ կը նետուին, առանց գիտնալու որ ահռելի գա հալէժի մը մէջ պիտի վանե զիրենք :

Ահա այս են հետեանք կուրաբար օտար ազգաց սովորութեանց հետեւելու պախարակելի եռանդին : Աղբարք, եթէ Ալբուրացի ազգաց նմանելու տենդով կը առչորիք՝ անանց ուսմանքը, գիտութիւնները, արհեստները, բարի սկզբունքը և բարի սովորութիւնները ստանալու ջանացէք : Ի՛նչ որ կ'ուզէք ստանալ՝ ձեր կամ խոհեմագոյնի դատողութեամբը ստացէք : Այն բանի վրայ Ալբուրացի գրոշմը տեսնելով՝ խիոյն մի յափշտակէք զայն : Ի՛այց ուր է այն դատողութիւնը : Այն ճշմարտագէտ լուսաւորեալ ըլլայիք՝ յայնժամ ձեր մտքին լուսովը բարի ճանապարհի մէջ կ'ընթանայիք, բայց կտրէք մտօք, և որ կողմը տանին ըզձեզ, դէպ ՚ի այն կողմը կ'ուզէք քայլերնիդ : Փոսին մէջ պիտի զղջար ձեր ընթացքին վրայ, բայց աւանդ, ալ հոն փրկութիւն չգոյ ձեզի :

Ստորին լուսաւորութիւնը այդքան մը բացատրելէն ետքը՝ քանի մը խօսք ալ ազգային լուսաւորութեան վրայ բռնէք, ինչպէս որ յառաջագոյն խոստացանք, զոր յայտ առնելու համար՝ բաւական կը համարինք յառաջ բերել մեծահամբաւ Արգոյնի մէկ խորհրդածութիւնը, որ ահաւասիկ :

“ Հատ ժամանակէ ՚ի վեր և շատ երկիրներու մէջ լուսաւորութիւն բառը կը գործածուի, որոյ անորոշ և անսահման նշանակութիւններ կու տան : . . .

“ Արթուրի ինձ թէ լուսաւորութիւն բառին իսկ և իսկ նշանակութիւնն է՝ յառաջադիմութիւն և զարգացումն : Իսկոյն կ'երևակայես ժողովուրդ մը՝ որ յառաջ կ'ընթանայ, չէ թէ տեղը փոխելու՝ այլ

« վեճակը փոխելու համար, ժողովուրդ մը՝ որոյ ընկե-  
 « րական կացութիւնը կ'ընդարձակի և կը բարեւա-  
 « նայ : Յառաջադիմութիւնը և զարգացումը լոսա-  
 « սորո-լի-ն բառին գլխաւոր նշանակութիւններն են  
 « ըստ իմ կարծեաց : Բայց ո՞րն է այս յառաջադիմու-  
 « թիւնը, ի՞նչ է ժողովուրդի մը զարգանալը, ահա՛  
 « աստ է մեծագոյն դժուարութիւնը :

« Եւջի բերանը՝ կարծես թէ՛ բառին ստուգաբա-  
 « նութիւնը այս հարցմունքին յստակ և համոզիչ պա-  
 « տասխանը կու տայ, որ է քաղաքական կացութեան  
 « կատարելութիւնը, բուն իսկ ընկերութեան զարգա-  
 « նալը, և մարդոց յարաբերութեանց ընդարձակիլը :

« Երգարեւ՝ այս է առաջին գաղափարը, որ մեր  
 « մտայ կը ներկայանայ երբոր լոսասորո-լի-ն բառը  
 « կ'արտասանեն : Իսկոյն կ'երեւակայենք ընկերական  
 « յարաբերութեանց ընդարձակիլը, և լաւագոյն կեր-  
 « պիւ հաստատուելէն ետքը՝ ՚ի գործ գրուելիք : Ա՛հ  
 « կողմէն ընկերութեան զօրութիւնը և բարօրութիւ-  
 « նը աճեցնելու հնարքներուն բազմանալը, միւս կող-  
 « մէն այն զօրութեան և բարօրութեան արգասեաց  
 « ամենեցուն արդարապէս բաշխիլը :

« Լուսաւորութիւն բառին բնական և գործածա-  
 « կան նշանակութիւնը այսքան է, ուրիշ բան չիպա-  
 « րուհակեր արդեօք :

« Փոխանակ այս հարցմունքին, նոյնն է հետեւեալ  
 « հարցմունքը ընել : Վարդկային սեռը մըջիւնի բոյն  
 « է, այսինքն այնպիսի ընկերութիւն մը ուր միայն  
 « բարեկարգութիւն և բարօրութիւն պէտք է գրա-  
 « նուի, ուր սամեայն յառաջադիմութիւնն է, աշխա-  
 « տութեան հասոյթը բազմապատկել, և զայն արգա-  
 « րապէս բաշխել :

« Վարդկային բնական դատողութիւնը՝ կը մերժէ  
 « իւր սեռին ճակատագրին համար՝ այնպիսի նեղ սահ-

« ման մը : Իսկոյն կ'ենթադրէ թէ՛ լուսաւորութիւն  
 « բառը ուրիշ ընդարձակագոյն և բարդ բան մը կը  
 « նշանակէ , որ առաւել է բան ղկառարելութիւն ըն-  
 « կերական յարաբերութեանց , զօրութեան և բա-  
 « բօրութեան : . . . . .

« Ի՞նչ կը նշանակէ ուրեմն այն բառը : Ի՞նչ ունին  
 « այն երկիրները , որք յանուն լուսաւորելոց՝ լուսա-  
 «ւորեալ կոչուելու արտօնութիւնը ստացեր են :

« Քաղաքական կացութեան զարգանալէն ՚ի զսա՛  
 « ուրիշ կերպ յաւաճագիծութիւն մը կը փայլի անդ ,  
 « որ է անձնական կացութեան , ներքին կացութեան  
 « զարգանալը . մէկ խօսքով մարդոց մտաւորական կա-  
 « բողութեանց , զգացմանց և գաղափարաց զարգա-  
 « նալը : . . . . . Գրականութիւնը , գիտութիւնը , ար-  
 « հեստք ամենայն պայծառութեամբ կը ներկայանան  
 « անդ : Աւր որ մարդկային սեռը այն գերազայն տե-  
 « սարանները կը նշմարէ՝ որոնք մարդկային բնութեան  
 « փառաւոր տիպն են՝ ուր որ այն չքնաղ վայելմանց  
 « գանձը կը տեսնէ՝ իսկոյն լուսաւորութիւն կը գոչե-  
 « և կ'ողջունէ զայն :

« Իսկէ որ լուսաւորութիւնը երկու բան կը պա-  
 « բուճնակէ , ընդ որս կը բաղկանայ , և երկու նշանիւք  
 « յայտնի կ'ըլլայ : Ինկերական յարաբերութեանց ըն-  
 « դարձակիլը և անձնական կացութեան զարգանալը՝ :

« Այժմ՝ պէտք է որ վերոյգրեալ տողերը բացատ-  
 « րենք , որպէս զի ծուռ մեկնութիւններու տեղի չտան :  
 « Այն հատուածին մէջ հեղինակը կրօնքին ազ-  
 « դեցութիւնը չի բացատրեր ժողովուրդի մը լուսաւո-  
 « րութեան վրայ , բայց տեսէք ի՞նչպէս կը խօսի ուրիշ  
 « տեղ մը : « Այժմ կրնայ ուրանալ որ քրիստոնէութիւ-  
 « նը լուսաւորութեան առաջնորդ եղաւ : . . . . .

1 Պատմութիւն նոր , կիգոյն :

” քանզի մարդոց զգացմունքը փոխեց և աննոյ միտքը  
” և բարոյականութիւնը զտեց <sup>1</sup> ” :

Վարձեալ տեսէք ինչպէս կը խօսի ուրիշ երևելի  
մատենագիր մը կրօնքին ազդեցութեան վրայ :

“ Ճողովուրդի մը կեանքը կրօնքն է : . . . : Ամեն  
” տեղ և ամեն ժամանակ՝ ազգք իրենց կրօնքին չափ  
” կ'ապրին : Անոնք որ ընդհանուր կործանմանէ ազա-  
” տեր են, և այլք որ կորսուեր են՝ այս օրէնքին կա-  
” տարեալ հաստատութիւն կուտան <sup>2</sup> ” :

Բ. “ | լուսաւորութիւնը մարդոց մտաւորական կա-  
” բողութեանց, զգայմանց և գաղափարաց զարգանալն է ” :  
կ'ըսէ դարձեալ Պ. Արզոյ :

Իսոյ գիտնալու է որ մարդիկ առհասարակ իրենց  
զգացմունքը և գաղափարները իրենց կրօնքէն կ'ըն-  
դունին : Ա կան Պօսիւէին սա խօսքերը :


“ Կրօնքը ամենուն սրտին մէջ մի և նոյն զգայմունք  
” ները լեցնելով՝ ժողովուրդի մը բազմութիւ անդամ  
” ներէն մէկ անձ, մէկ հոգի կը ձեւացնէ <sup>3</sup> ” :

Ան ապաքէս կը բացատրէ լուսաւորութիւնը  
մեծահամբաւ Վազղիացին : Ինկերական յարաբերու-  
թեանց ընդարձակիլը և մարդկային նիւթական և բա-  
րոյական վիճակին բարելաւնալը, որոնցմով կ'ովնարկէ  
նիւթական լուսաւորութիւնը և բարոյական լուսա-  
ւորութիւնը :


Արդ՝ ո՞վ լուսաւորեալք՝ դուք որ ազգին կառու-  
վարութեան սանձը ունենալու կը խորհիք, իմաստնոց  
խօսքերը, զորս յառաջ բերինք՝ ՚ի միտ առէք, և խրա-  
տեցարուք :

Վարդուն և ժողովուրդի մը լուսաւորութեան ինչ  
ըլլալը իմացաք՝ այնպէս լուսաւորելու ջանացէք զձեզ  
և ձեր ազգը, որպէս զի փառօք՝ պատկուելիք :

<sup>1</sup> Նոյնը : <sup>2</sup> Էմէ - Մարթէն, Վաստիարակութիւն մտք : <sup>3</sup> Պօսիւէ.  
Տիեզերական պատմութիւն :







2001

0016372

2048

